«NEW GENERATION»
Humanitarian Non-Governmental Organization

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»
Մարդասիրական Հասարակական Կազմակերպություն

#21 Հոկտեմբեր / Նոյեմբեր 2016

ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ

#20/21

«Ժամանակին Համաքայլ» ամսագիրը պարունակում է տվյալ ամսում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացված գործունեության համապարփակ նկարագիրը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

#ngngo

© Copyright - ngngo 2016

Հայաստան 0019 Երևան Բաղրամյան 49, բն. 7
Հեռ: +374 60 378989; +374 60 478989
newgenerationngngo@gmail.com | http://ngngo.net

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԿՈՉԵՐ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՂ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ

Նարինե Բարսեղյան

Լեւոն Գրիգորյան

Մարգարիտա Հարթենյան

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի անդամներ Արման Սահակյանն ու Գրիգոր Գևորգյանը դիմել են ՀՀ արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանին՝խնդրելով հարուցել կարգապահական վարույթ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորներ Նարինե Բարսեղյանի, Լևոն Գրիգորյանի եւ Մարգարիտա Հարթենյանի նկատմամբ: Հիմքը դատավորների ոչ իրավաչափ վարքագիծն է, որը դրսևորվել է Ազգային Ժողովի Հանրապետական խմբակցության պատգամավոր Հայկ Բաբուխանյանի ներազդմամբ: Վերջինս, հանդիսանալով «Իրավունք Մեդիա» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն, բողոք է ներկայացրել «Իրավունք» թերթի դեմ կայացված և արդեն իսկ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի դեմ: Հայկ Բաբուխանյանն իր բողոքում նշել է, թե ինքն իբրև հանդիսացել է վերոնշյալ դատական վեճի մասնակից և չի ծանուցվել դատական նիստի մասին: Սա բացահայտ կեղծիք է, քանի որ Բաբուխանյանի դեմ հայց չի ներկայացվել, նրա դեմ կայացված դատական ակտ չի եղել, նա որևէ պատասխանատվության չի ենթարկվել, որպեսզի հետագայում բողոքարկի իր դեմ կայացված դատական ակտը:

«Բաբուխանյանը չունի որևէ իրավական շահ բողոքարկելու մի դատական ակտ, որով նրա նկատմամբ որևէ անբարենպաստ հետևանք չի առաջացել: Դեռեւս առաջին ատյանի դատարանում տվել եմ պարզաբանում կապված նրա մասնակցության հարցի հետ՝ նշելով, որ հայցը ներկայացված է ոչ թե նրա , այլ ընկերության դեմ, ինչը և հետագայում բավարարվել է»,- պարզաբանում է Արման Սահակյանի ու Գրիգոր Գեւորգյանի շահերը ներկայացնող փաստաբան Մարո Խաչատուրյանը: Նա նշում է, որ Վերաքննիչ դատարանը կարող էր և պարտավոր էր փաստել Բաբուխանյանի բողոքարկման իրավունքի բացակայությունը դեռևս բողոքը վարույթ ընդունելու հարցը քննարկելիս, մինչդեռ կատարել է ճիշտ հակառակը և փաստորեն ճանաչել է Հայկ Բաբուխանյանին գործով պատասխանող: «Ես անմիջապես ինքնաբացարկի միջնորդություն եմ ներկայացրել երեք դատավորների դեմ, քանի որ նրանք կողմնակալ են եղել գործի հենց սկզբից: Իմ միջնորդությունը մերժվեց, փոխարենը բավարարվեց Բաբուխանյանի բերած բողոքը, ինչը այսքանից հետո շատ սպասելի էր»,- ասում է Մարո Խաչատուրյանը:

Արման Սահակյանն ու Գրիգոր Գեւորգյանն արդեն դիմել են Վճռաբեկ դատարան, որը նախկինում արտահայտել է իր դիրքորոշումը սույն գործով՝ «Իրավունքի» դեմ կայացրած վճիռը թողնելով օրինական ուժի մեջ: Սակայն իրադարձությունների այսպիսի զարգացման պայմաններում, նրանք կանխատեսելի են համարում կայացվելիք դատական ակտը՝ փաստելով դատական համակարգի անկախության բացակայությունը:

Հիշեցնենք, որ 17.05.2014թ. www.iravunk.com առցանց լրատվական կայքում մի նյութ էր հրապարակվել, որը հեղինակել է լրագող Հովհաննես Գալաջյանը: Հոդվածում հեղինակը կոչ է արել դրսևորել անհանդուրժողականություն «Նոր սերունդ» Մարդասիրական հասարակական կազմակերպության և դրա անդամների նկատմամբ, այդ թվում այլ քաղաքացիների, ովքեր հոդվածի հեղինակի կարծիքով՝ կապ ունեին կազմակերպության հետ:

«Իրավունքի» կողմից «ցուցակագրված» Արման Սահակյանն ու Գրիգոր Գևորգյանը դատական հայց էին ներկայացրել ընդդեմ «Իրավունք մեդիա» ՍՊԸ-ի և հոդվածի հեղինակ Հովհաննես Գալաջյանի՝ պնդելով, որ հոդվածում տեղ են գտել իրենց պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը արատավորող մի շարք արտահայտություններ, որոնք ոչ միայն վիրավորական ու զրպարտող են, այլև՝ ատելության խոսքի դրսևորումներ: 2015թ. մայիսի 14-ի վճռով դատարանը հայցը բավարարել է մասնակի՝ պարտավորեցնելով պատասխանողներին հրապարակման միջոցով հերքել հոդվածում տեղ գտած արատավորող, վիրավորական արտահայտությունները և հրապարակայնորեն ներողություն խնդրել հայցվորներից: Պատասխանողից հօգուտ հայցվորների նշանակվեց նաև զրպարտության համար փոխհատուցման զգալի գումար: Խտրականության (ատելության խոսքի) մասով հայցը մերժվել է Քաղաքացիական օրենսգրքում նյութահիրավական հիմքի բացակայության հիմքով: Դատարանի վճիռը մտել է ուժի մեջ, քանի որ հունիսի 12-ին պատասխանողների ներկայացրած վերաքննիչ բողոքը և դրան հաջորդող վճռաբեկ բողոքը մերժվել են: Այսքանից հետո Հայկ Բաբուխանյանին հաջողվել է բեկանել օրինական ուժ ստացած դատական ակտը: «Խախտումն ակնհայտ է, քանի որ վճռի եզրափակիչ մասի ուսումնասիրումն արդեն իսկ բավարար է այն հաստատելու համար: Այսինքն, առանց գործի նյութերի մանրամասն ուսումնասիրման, հնարավոր է վճռի եզրափակիչ մասին առաջին իսկ հայացքից արձանագրել, որ Հայկ Բաբուխանյանը որևէ ձևով չի առնչվում գործի հետ՝ նրա նկատմամբ չկա կայացված անբարենպաստ դատական ակտ: .....Սույն հանգամանքն այնչափ ակնհայտ է, որ նույնիսկ ոչ իրավաբանի համար կասկածի հիմքեր չի առաջացնում»,- նշված է Արդարադատության նախարարին հասցեագրված դիմումում: «Ես հուսով եմ, որ ատելության կոչերը հովանավորող դատավորները պատասխանատվության կենթարկվեն, այլապես ստացվում է, որ պետությունը հովանավորում է ատելություն քարոզող անձանց»,- ասում է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի անդամ Գրիգոր Գևորգյանը:

ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐԸ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՔ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի նախագահ Սերգեյ Գաբրիելյանը ելույթ է ունեցել հոկտեմբերի 11-12-ին Ուկրաինայի մայրաքաղաք Կիեւում անցկացվող տարածաշրջանային խորհրդատվության ժամանակ, որը նվիրված էր ՄԻԱՎ-ով ապրող անձանց ցուցաբերվող աջակցության ընդլայնմանը:

«Այստեղ շատ խոսվեց խոչընդոտների, խտրականության եւ խարանի մասին: Մեր կարծիքով, խոչընդոտների հաղթահարման լավագույն եղանակը շահերի պաշտպանությունն ու ջատագովությունն է (advocacy)»,- իր ելույթն այպես է սկսել Սերգեյ Գաբրիելյանը:

Նա ներկայացրել է, թե ինչ է ջատագովությունն իրենից ներկայացնում եւ ինչ քայլել են իրավապաշտպանները ձեռնարկում հաջողության հասնելու համար: «Ջատագովությունը գործողությունների շարք է՝ ուղղված քաղաքական եւ տնտեսական իշխանություն ունեցող անձանց, որպեսզի նրանք այնպիսի քաղաքականություն իրականացնեն, որից կշահի հասարակությունը»,- ասել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի նախագահը: Սերգեյ Գաբրիելյանը ներկայացրել է ջատագովության ուղղությունները՝ մարդու իրավունքների պաշտպանություն, պետական բյուջետավորում, օրենսդրական փոփոխություններ, տեղեկացվածության բարձրացում, ինչպես նաեւ շահերի պաշտպանության եւ ծառայությունների մատուցման ընթացքում գենդերային զգայունության պահպանում:«Եվ որպեսզի այս ամենը իրականություն դառնա, անհրաժեշտ է ամենակարեւորը՝ քաղաքական կամք»,- ընդգծել է Սերգեյ Գաբրիելյանը:

Տարածաշրջանային խորհրդատվությանը մասնակցել են իրավապաշտպաններ Հայաստանից, Ադրբեջանից, Վրաստանից, Էստոնիայից, Ղազախստանից, Ղրղզստանից, Լիտվայից, Բելառուսից, Մոլդովայից, Ռուսաստանից, Շվեյցարիայից, Վիետնամից, Ուզբեկստանից եւ Ուկրաինայից: Խորհրդատվությունը կազմակերպել էր Արեւելյան Եվրոպայում եւ Կենտրոնական Ասիայում ՄԻԱՎ-ով ապրող անձանց միությունը:

«ՊԵՏՔ Է ՁԵՎԱՎՈՐԵԼ ԱՊԱՀՈՎԵԼ ՄԹՆՈԼՈՐՏ, ՈՐՏԵՂ ԲՈԼՈՐԸ ՀԱՎԱՍԱՐ ԵՆ»

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի իրավաբան Արթուր Մակարյանը մասնակցել է Մեդիա կենտրոնում Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության կոալիցիայի կողմից կազմակերպված մամուլի ասուլիսին, որը նվիրված էր խտրականության դեմ պայքարին և Հայաստանում հակախտրականության օրենքի ընդունման անհրաժեշտությունը: Արթուր Մակարյանն իր խոսքում նախ ընդգծեց, որ խտրականությունն առնչվում է յուրաքանչյուրիս և բոլորիս և ցանկացած անձ կարող է բախվել այս խնդրին՝ դառնալով խտրականության ուղղակի կամ անուղղակի զոհը: Իրավաբանը հիշեցրեց, որ 2015թ.-ին 11 հասարակական և 2 լրագրողական կազմակերպություններ միավորվեցին՝ կազմելով Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության կոալիցիան՝ նպատակ ունենալով ձևավորել մեկ ընդհանուր հարթակ խնդրին առնչվող հիմնահարցերերը խմբավորելու և ընդհանրական լուծումներ գտնելու համար: «Կոալիցիայի անդամ կազմակերպությունները համաձայնություն հայտնեցին գործելու միասնականորեն և աջակցելու ՀՀ կառավարությանը իրացնել Մարդու Իրավունքներին վերաբերող գործողությունների ռազմավարական պլանը, որով նախատեսվում է նաև պայքար խտրականության դեմ»,- ասաց Արթուր Մակարյանը 2016թ.-ին թվականին կոալիցիան, արդեն որպես հիմնավոր ձևավորված մարմին, մշակել է իր գործողությունների ռազմավարությունը և այն ընդհանուր արժեքները, որոնք կիսում են անդամ հանդիսացող բոլոր կազմակերպությունները: Կոալիցիայի նպատակն է նվազեցնել պետական քաղաքականությունում, օրենքներում, սոցիալական նորմերում և պրակտիկաներում խտրականության դրսևորումները՝ ջատագովելով համապարփակ և արդյունավետ հակախտրականության օրենսդրության ընդունումն ու կիրառումը, մարտահրավեր նետելով անհավասարության գերիշխող հանրային դիսկուրսին և ինստիտուցիոնալացված խտրական պրակտիկաներին, ինչպես նաև հզորացնելով խտրականության ենթակա խմբերին: Ելնելով այս ռազմավարական նպատակից՝ մշակվել են նաև այն հիմնական ուղղությունները, որոնց շուրջ կոալիցիան պետք է աշխատանքներ ծավալի առաջիկա 2 տարիների ընթացքում՝ Խթանել հավասարության մշակույթը՝ մարտահրավեր նետելով կարծրատիպերին ու բացառման գործոններին Եծացնել խտրականության ենթակա խմբերի տեսանելիությունը և բերել նրանց առաջնագիծ Իրավաբանն անդրադարձավ այս երկու ուղղություններին: «Շատերը ունեն որոշակի նախապաշարմունքներ և կարծրատիպեր հասարակության տարբեր սոցիալական խմբերի ներկայացուցիչների նկատմամբ: Այս կոնտեքստում ցանկանում ենք իրականացնել կարիքների գնահատում և բացահայտել բացառման այն գործոնները, որոնք տեղ ունեն տնտեսական, մշակութային և քաղաքական կյանքում: Բացառման կամ անձին այլ կերպ ընկալելու և նրան չընդունելու գործոններ կարող են հանդիսանալ, օրինակ, տվյալ անձի արտաքին տեսքը, հաշմանդամություն ունենալը, ՄԻԱՎ ունենալու հանգամանքը և այլն», – հայտարարեց Արթուր Մակարյանը:

Կոալիցիան փորձելու է գնահատել, թե ինչ արժե խտրականությունը, այսինքն՝ ինչպիսի ազդեցություն այն ունի տնտեսության վրա, ինչպես է նպաստում աղքատության ցուցանիշների ավելացմանը, միգրացիոն հոսքերի կառավարման դժվարությանը և այլն: Անդրադառնալով խտրականության ենթակա խմբերի տեսանելիությանը՝ իրավաբանը նշեց, որ շատ հաճախ, երբ լինում են երկխոսություններ ՀՀ կառավարության և այլ պատկան մարմինների ներկայացուցիչների հետ, վերջիններս նշում են, որ այն խմբերը, որոնք առավել շատ են ենթարկվում խտրականության մեր հասարակությունում, պարզապես չկան:«Դեռևս մի քանի տարի առաջ ՄԻԱՎ-ը հասարակության շատ լայն զանգվածում համարվում էր միֆ, իսկ ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ պարզապես «գոյություն չունեին»: Սակայն այսօր բոլորս ենք ականատես լինում այն խտրական դեպքերին, որոնց առնչվում են թե ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ, թե այլ խմբերի ներկայացուցիչներ՝ ներառյալ այն ածինք, ովքեր չեն էլ ենթադրում, որ, օրինակ, իրենց չեն ընդունել աշխատանքի, քանի որ 25 տարեկանից բարձր են և, ըստ այդ

գործատուի, չունեն բարետես արտաքին»,- ասաց Արթուր Մակարյանը:Նա շեշտեց, որ Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության կոալիցիան ցանկանում է ձևավորել ապահով մթնոլորտ բոլոր այն խմբերի համար, որոնք ենթարկվում են խտրականության առօրյա կյանքում և չեն կարող հավասարապես իրացնել օրենքով և մարդու իրավունքների միջազգային դաշնագրերով սահմանված իրենց իրավունքները:

ՄԻԱՎ-Ի և ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՍԵՄԻՆԱՐ

2016 թվականի հոկտեմբերի 14-ին Երևան քաղաքում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն իրականացրել է մեկօրյա սեմինար «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումն ու ՄԻԱՎ-ի թեստավորման կարևորությունը» և «Մարդու իրավունքներն ու ՄԻԱՎ-ը» թեմաներով:

Սեմինարը տեղի է ունեցել «Հոդված 3» ակումբում:

ՆՈՐ ԵՐԳ ԵՒ ՏԵՍԱՀՈԼՈՎԱԿ՝ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացնում ենք «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» հաշմանդամություն ունեցող անձանց հասարակական կազմակերպության կողմից գրված երգը, որի հիման վրա նկարահանվել է տեսահոլովակ: Այն ստեղծվել է «Նոր Սերունդ» Մարդասիրական հասարակական կազմակերպության ենթաֆինանսավորմամբ, որը հնարավոր է դարձել «Բաց Հասարակություն Հիմնադրամներ – Հայաստան» կազմակերպության ֆինանսական աջակության շնորհիվ: Հոլովակի նպատակն է հասարակության ուշադրությունը հրավիրել տարբեր բնագավառներում խտրականության առկայության վրա:

ԻՆՉՊԵՍ ՆՎԱԶԵՑՆԵԼ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 11-12-ին Երեւանում անցկացվեց «Աջակցություն տրանսգենդեր անձանց նկատմամբ խտրականության նվազեցմանը» երկօրյա դասընթաց: Այն կազմակերպել էր «Իրավունքի կողմ» հասարակական կազմակերպությունը՝ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի տրամադրած դրամաշնորհի շրջանակներում: Հոդված 3 ակումբում «Իրավունքի կողմ» ՀԿ-ի անդամները, կամավորներն ու շահառուները սովորեցին ռազմավարական պլանավորման հմտություններ, որոնք պետք է կիրառեն տրանսգենդեր անձանց նկատմամբ խտրականության նվազեցման ուղղությամբ: «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի իրավաբան Արթուր Մակարյանը ներկայացրեց մարդու իրավունքների համընդհանուր հասկացությունը եւ խտրականության դրսեւորման ձեւերն ու պատճառները: Իսկ կազմակերպության համակարգող Նարե Հովհաննիսյանն էլ ներկայացրեց տրանսգենդեր համայնքի խնդիրների վերլուծությունը եւ տրանսգենդերների նկատմամբ խտրականության նվազեցման ռազմավարական գործողությունների պլանավորումը:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՆՈՐ ՕՆԼԱՅՆ ՀԱՐԹԱԿ՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Ի ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՀԿ-ՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Նոր սերունդ» մարդասիրական ՀԿ ներկայացուցիչ Նարե Հովհաննիսյանն էլ ընդգծել է, որ կայքը ստեղծելով, Հարավային Կովկասի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի խնդիրներով զբաղվող ՀԿ-ները իրականում նպատակ ունեն խթանել համագործակցությունը, որպեսզի կարողանան դրականորեն ազդել ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց կյանքի որակի վրա:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՆՈՐ ՕՆԼԱՅՆ ՀԱՐԹԱԿ՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Ի ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՀԿ-ՆԵՐԻ ՀԱՄԱՐ

31 հոկտեմբերի 2016թ. «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի գրասենյակում տեղի է ունեցել աշխատանքային հանդիպում՝ «Առողջությունը կարելի է գնել, եթե հատկացված է բյուջե» ծրագրի շրջանակներում: Քննարկմանը մասնակցում էին «Իրական աշխարհ, իրական մարդիկ» ՀԿ, «Ներուժ զարթոնքի» ՀԿ, «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ և «Իրավունքի Կողմ»ՀԿներկայացուցիչները: Քննարկմանը հեռազանգի միջոցով մասնակցեցին նաև Հայաստանի, Էստոնիայի և Ղրղզստանի գործընկերներն ու համապատասխան տարածաշրջանների ղեկավարները:

Հանդիպման նպատակն էր ծրագրի առաջին հատվածի ամփոփումն ու հետագա անելիքների ուրվագծումը, ինչպես նաև շահերի պաշտպանության պլանի իրականացմանն ուղղված աշխատանքների կազմակերպումը:

«ՄԻԱՎ-Ի և ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄՆ ՈՒ ՄԻԱՎ-Ի ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ» և «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՄԻԱՎ-Ը» ԹԵՄԱՆԵՐՈՎ:

Հոկտեմբերի 28-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի գրասենյակում անցկացվեց մեկօրյա սեմինար՝ «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումն ու ՄԻԱՎ-ի թեստավորման կարևորությունը» և «Մարդու իրավունքներն ու ՄԻԱՎ-ը» թեմաներով:

ILGA-EUROPE-Ի ՏԱՐԵԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի անդամ Արման Սահակյանը 2016թ. հոկտեմբերի 19-23- մասնակցում է Կիպրոսում կայացած ILGA-Europe-ի տարեկան կոնֆերանսին, որն անցկացվում է արդեն 20-րդ անգամ: Հիշեցնենք, որ այս տարի «Նոր Սերունդը» դարձել է ILGA-Europe-ի անդամ:

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԸ» ԸՆՏՐՎԵԼ Է ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԼԱՏՖՈՐՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՂ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ



«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ ներկայացուցիչներ Նարե Հովհաննիսյանը, Գրիգոր Գևորգյանը և Արման Ղարիբյանը նոյեմբերի 10-11 մասնակցում են Վրաստանում ընթացող տարածաշրջանային հանդիպմանը՝ «Առողջապահություն, ֆինանսներ և կառավարում» ծրագրի շրջանակներում, որն իրագործվում է «Բի էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոնի կողմից՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ:

Ծրագիրն ուղղված է Հայաստանի, Ադրբեջանի և Վևաստանի այն հասարակական կազմակերպություններին, որոնք տրամադրում են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի շրջանակներում բուժօգնություն և աջակցություն, և/կամ աշխատում են թմրամիջոցներ օգտագործողների և այն տղամարդկանց հետ, որոնք սեռական հարաբերություն են ունենում այլ տղամարդկանց հետ: «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն ընտրվել է մասնակցելու և օգտվելու այս համապարփակ ծրագրից՝ հատուկ դիտարկումների և ուսումնասիրությունների արդյունքում:

Ծրագիրն ավարտական փուլում է և այս օրերի հանդիպումն ուղղված է կատարված աշխատանքները ամփոփելու և endhivaids.orgօնլայն հարթակի աշխատանքների համակարգման հարցերը քննարկելու:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն ընտրվել է տարածաշրջանային պլատֆորմի առաջին տարվա կառավարող խորհրդի անդամ, ինչպես նաև առաջին 6 ամիսների կայքի ադմինիստրատոր:

Հայաստանից ծրագրին նաև մասնակցում են «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք», «Իրական աշխարհ, իրական մարդիկ», «Դրական մարդկանց հայկական ցանց», «Հայաստանի բժիշկ ուսանողների գիտական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունները:

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ԾԱՆՈԹԱՆԱԼՈՒ ԷԻՆ ԵԿԵԼ ECOM-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

2016թ. Նոյեմբերի 11-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական հասարակական կազմակերպությունն իր գրասենյակում հյուրընկալել էր Տղամարդկանց Առողջության Եվրասիական Կոալիցիայի (Eurasian Coalition on Male Health – ECOM) գործադիր տնօրեն Վիտալիյ Դյումային և մոնիթինգի և գնահատման համակարգող Մաքսիմ Կասիանչուկին:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի ղեկավար Սերգեյ Գաբրիելյանը նախ ներկայացրեց այն բոլոր ծրագրերը, որոնք ներկա պահին իրականացնում է կազմակերպությունը: Ապա միզազգային գործընկերների հետ քննարկեցին ԼԳԲՏ+ համայնքի խնդիրները ու այն ծրագրերը, որոնք ուղղված են համայնքի խնդիրները վերացնելուն: Անդրադարձ կատարվեց Հայաստանում առկա խտրականությանը ու դրա հետևանքներին:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի երևանյան գրասենյակի զեկավար Արման Սահակյանն էլ ներկայացրեց, թե ինչպիսի խնդիրների են բախվում ԼԳԲՏ+ անձինք պարտադիր զինվորական ծառայության անցնելիս: Ի հավելում Արման Սահակյանի Սերգեյ Գաբրիելյանը շեշտեց, որ համայնքի

ներկայացուցիչների նկատմամբ դրսևորվում է խտրական վերաբերմունք, ինչի պատճառով էլ ԼԳԲՏ+ համայնքի ներկայացուցիչները խուսափում են ծառայությունից, քանի-որ զորամասերում հավանականությունը մեծ է, որ տվյալ անձինք բռնության կենթարկվեն:

Իսկ «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումը և տեղեկացվածության մակարդակի բարձրացումը ՏՍՏ-ների շրջանում Շիրակի, Լոռու մարզերում և Երևան քաղաքում» ծրագրի համակարգող Արտյոմ Մովսեսյանն անդրադարձավ շահառուների հետ շփման ու նրանց հայտնաբերման առանձնահատկություններին: Հանդիպմանը մասնակցում էր նաև «Իրավունքի կողմ» ՀԿ-ի նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը, ով խոսեց տրասնգենդեր անձանց խնդիրների առանձնահատկությունների մասին և ներկայացրեց կազմակերպության աշխատանքը: ECOM-ի ներկայացուցիչները, կարևորելով նմանատիպ հանդիպումները, խոսեցին այն ծրագրերի մասին, որոնք իրենք իրականացնում են տարածաշրջանում ԼԳԲՏ+ համայնքի խնդիրները վերացնելու համար:

Վիտալիյ Դյուման և Մաքսիմ Կասիանչուկը առաջիկա օրերին ծանոթանալու են Հայաստանում ԼԳԲՏ+ համայնքի իրավունքների պաշտպանությամբ զբաղվող այլ կազմակերպությունների և անձանց հետ:

«ՄԻԱՎ-Ը ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն «Մարդու իրավունքները հանուն բազմազանության և հավասարության» ծրագրի շրջանակներում նոյեմբերի 22-ին «Հոդված 3» ակումբում կազմակերպեց «ՄԻԱՎ-ը և մարդու իրավունքները» թեմայով դասընթաց: Այն նախատեսված էր ծրագրի շահառուների և հետաքրքրված անձանց համար: Դասընթացն այս անգամ առանձնացավ նրանով, որ մասնակիցներին «ՄԻԱՎ-ը և մարդու իրավունքները» թեմայից բացի ներկայացվեց նաև «Անձի իրավական կարգավիճակը իրավապահ մարմիններում» թեման: Այս հատվածում մասնակիցները ծանոցաթացան իրավապահ մարմինների կատարած խախտումների և տեսական գիտելիքներ ստացան ոստիկանության հետ շփման ու քաղաքացիների իրավունքների խախտումների դեպքերի վերաբերյալ:

Մասնակիցները ստացած տեսական գիտելիքները կարողացան գործնական օրինակների հիման քննարկել խմբային խաղերի ու աշխատանքների, մտքերի փոխանակման և հարց ու պատասխանի միջոցով:

ՄՈՄԱՎԱՌՈՒԹՅՈՒՆ՝ Ի ՀԻՇԱՏԱԿ ՏՐԱՆՍԱՖՈԲԻԱՅԻՆ ԶՈՀ ԴԱՐՁԱԾ ԱՆՁԱՆՑ

Նոյեմբերի 20-ը ամբողջ աշխարհում նշվում է որպես տրանսաֆոբիային զոհ դարձած անձանց հիշատակի օր: Այդ կապակցությամբ Հայաստանում 1-ին անգամ «Իրավունքի Կողմ» Իրավապաշտպան ՀԿ-ն կազմակերպել էր մոմավառություն: «Իրավունքի Կողմ» Իրավապաշտպան ՀԿ նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը մեզ հետ զրույցում նշեց, որ մահացության դեպքերը գրանցվում են հիմնականում այն երկրներում, որտեղ չկա հակախտրականության մասին օրենք: Հայաստանում դեռևս չկա վիճակագրություն՝տրանսոֆոբիայի զոհ դարձած անձանց վերաբերյալ: «Բոլոր մարդիկ բռնությունից, հալածանքից, խտրականությունից և խարանից զերծ մնալու հավասար իրավունքներ ունեն: Սակայն այն հասարակությունում, որտեղ մենք ենք ապրում, այդ ամենը անտեսված է: Մեր հասարակությունը, պետական կառույցները երբեմն մոռանում են մարդու իրավունքների միջազգային դրույթը, որը պետությունների առջև պարտավորություն է սահմանում, որպեսզի

ցանկացած մարդ, առանց բացառության, կարողանա օգտվել այս իրավունքներից» – մեզ հետ զրույցում շեշտեց «Իրավունքի Կողմ» Իրավապաշտպան ՀԿ-Ի հիմնադիր նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը

«Իրավունքի Կողմ» Իրավապաշտպան ՀԿ-ն, հանդիսանալով հայաստանում առաջին կառույցը ով զբաղվում է տրանսգենդերներ անձանց հիմնախնդիրներով, մոմավառության միջոցով ցանկանում է բոլորի ուշադրությունը հրավիրել տրանսգենդեր անձանց իրավունքների ոտնահարման խնդրին:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի անդամները ևս մասնակցել են մոմավառությանը՝պահելով բոլոր այն տրանսգենդեր անձանց հիշատակը, ովքեր սպանվել են հետերոնորմատիվ հայրիշխանության ձեռքում:

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻԱԿԱՆ ՀԿ-Ն ՆՈՐ ԾՐԱԳԻՐ Է ՄԵԿՆԱՐԿՈՒՄ

Հոդված 3 ակումբում տեղի ունեցավ «Հայաստանում ՄԻԱՎ-ի հակազդման համար քաղաքացիական հասարակության կառույցների աջակցություն և հզորացում» ծրագրի շնորհանդեսը: Ծրագիրն իրականացվելու է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից: Այն նպատակ ունի աջակցել ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հակազդման Ազգային ծրագրի իրականացմանը՝ կարողությունների զարգացման, լոբբինգի և շահերի պաշտպանության միջոցով:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի նախագահ Սերգեյ Գաբրիելյանը տեղեկացրեց, որ ծրագրի թիրախային խմբերն են տղամարդկանց հետ սեռական հարաբերություններ ունեցող տղամարդիկ (SUS),տրանսգենդեր անձինք, ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ (ՄԻԱՎ ԱՄ), թմրամիջոցների ներարկային օգտագործողները (ԹՆՕ) և սեռական ծառայություններ մատուցող կանայք (ՍԾԿ):

Ծրագրի շրջանակներում կազմակերպվելու են կարողությունների զարգացման դասընթացներ՝ թիրախային խմբերի հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների համար: Կատարվելու է ՄԻԱՎ-ին առնչվող առողջապահական հասանելիության կարիքների գնահատում և առաջնահերթությունների վերհանում:

«Ծրագրի ավարտին պատրաստվում ենք հրապարակել թիրախային խմբերի՝ ՄԻԱՎ-ին առնչվող առողջապահական ծառայությունների վերաբերյալ զեկույց / առաջարկ՝ թիրախային խմբերի կարիքները և առաջնահերթությունները ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման 2017-2020 թվականների ազգային ծրագրի բյուջետավորման մեջ ներառելու նպատակով»,- հավելեց Սերգեյ Գաբրիելյանը:

Շնորհանդեսի ավարտին կազմակերպության նախագահը և Ծրագրի համակարգողը հայտարարեցին աշխատանքների մեկնարկի մասին: Շնորհանդեսին ներկա էին տարբեր հասարակական կազմակերպությունների նախագահներ ու ոլորտի ներկայացուցիչներ:

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾՎՈՒՄ ԵՆ, ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆՆԵՐԸ՝ ՈՉ

Քրեակատարողական հիմնարկներում հասարակական վերահսկողության դիտորդական խումբն այսօր ներկայացրել է 2014-15թթ.-ի հաշվետվությունը: Այնտեղ հստակ նշված են այն խնդիրները ու խոչընդոտները, որոնց հիմնականում առնչվում են ազատազրկված մարդիկ: Դիտորդական խմբի անդամները, բացի արձանագրված խնդիրներից նաև ուշադրություն հրավիրեցին այն հանգամանքին, որ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում եւ մարմիններում

հասարակական վերահսկողություն իրականացնող դիտորդների աշխատանքները 2016 թվականի ընթացքում որոշակիորեն խոչընդոտվել են:
Դիտորդական խմբի անդամ Ռոբերտ Ռևազյանը նշեց, որ 2005 թ.-ից ի վեր խումբը խնդիր չի ունեցել տեսակցելու ցանկացած դատապարտվածի եւ ցանկացած խուց մտնելու համար: «2016 թվականից որդեգրվեց մի քաղաքականություն, որ եթե քննիչի կողմից արգելանք է դրված որևէ անձի նկատմամբ, խումբը չի կարող այդ անձի հետ տեսակցել: Միաժամանակ, խմբի անդամներին թույլ չէին տալիս մտնել խուց և դիտարկում իրականացնել: Խումբը առհասարակ զրկվեց կալանավորվածների խուց մտնելուց»:
Ներկայացնելով 2014-15 թթ. –ին կատարված ուսումնասիրության արդյունքները՝ քրեակատարողական հիմնարկներում վերահսկողություն իրականացնող դիտորդական խմբի նախագահ Արայիկ Զալյանը տեղեկացրեց, որ բացահայտված խնդիրները վերաբերել են մասնավորապես բժշկական ոլորտին, վաղաժամ ազատ արձակման, պահման պայմաններին՝ գերբնակեցմանը և հատուկ կարիքներ ունեցող անձանց: Նա նշեց, որ հիմնականում լուծվում են անհատական խնդիրները, իսկ համակարգայինները լուծում ստանում են շատ դանդաղ:
Դիտորդական խմբի անդամ, «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի ներկայացուցիչ Արման Սահակյանն էլ տեղեկացրեց, որ

խտրականությունը քրեակատարողական հիմնարկներում շարունակում է մնալ գլխավոր խնդիրներից մեկը: Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք, չգրված օրենքներին չենթարկվողներն ու նույնասեռականները հիմնական թիրախային խմբերն են:
Արման Սահակյանը բացատրեց, որ չգրված օրենքներին չենթարկվողներին հաճախ անվանում են «թռածներ»: «Այս մարդիկ հաճախ իրենց դիմումի համաձայն տեղափոխվում են առանձնացված խցեր, որոնց անվանում են «թռածների խցեր»:

Մեկ այլ խնդիր է, մեթադոնային բուժում ստացող անձանց վերաբերող խտրական վերաբերմունքը: Արման Սահակյանի խոսքով՝ այս անձինք կրկնակի խոցելի են, քանի որ և բուժման կարիք ունեն և խտրական վերաբերմունքի են արժանանում. «Դատապարտյալները մեզ պատմել են, որ ՔԿՀների աշխատակիցները իրենց անվճար բուժման ծրագրում գրանցելուդիմաց որոշակի ծառայություններ են պահանջում, այնինչ մեթադոնային անվճար բուժում ստանալը բուժման կարիք ունեցողների իրավունքն է», – հայտարարեց Արման Սահակյանը:
ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանը նշեց, որ իրենք ծանոթ են ուսումնասիրություններին և ներկայացրել են իրենց առարկությունները, սակայն փորձում են բարձրացված խնդիրներին լուծում տալ:

ՄԱՄՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՍ «Ի՞ՆՉ ՓՈՒԼՈՒՄ Է ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ»

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի ներկայացուցիչ Նարե Հովհաննիսյանը մասնակցել է «Ի՞նչ փուլում է Խտրականության դեմ օրենքի նախագիծը» թեմայով քննարկմանը:

«ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔ՝ ՀԱՆՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ». ԴԱՍԸՆԹԱՑ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն Գյումրիում 2016 թ.-ի նոյեմբերի 23-26-ը կազմակերպել էր «Խտրականության արգելք՝ հանուն ժողովրդավար հասարակության» թեմայով դասընթաց ՀՀ Քրեակատարողական հիմնարկների 11 ներկայացուցիչների համար: Դասընթացի շրջանակներում Քրեակատարողական հիմնարկների ներկայացուցիչները ծանոթացել են մարդու իրավունքների հասկացությանը, խտրականության և խոշտանգումների կանխարգելման կարևորությանը ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության համատեքստում:

Երեք օրերի ընթացքում քննարկվել են վերոնշյալ թեմաներին վերաբերող ուշագրավ հարցեր, որոնց դասընթացավարներ Ռոբերտ Ռևազյանը և Արա Ղազարյանը տվել են համապարփակ պարզաբանումներ:

Ծրագրի օգնական Նարե Հովհաննիսյանը մեզ հետ զրույցում նշեց, որ դասընթացի նպատակն էր բարձրացնել Քրեակատարողական հիմնարկների ներկայացուցիչների զգայունությունը ԼԳԲՏԻ խնդիրների նկատմամբ՝ կրթելով ԼԳԲՏԻ անձանց մարդու իրավունքների խախտումների և պաշտպանության մեխանիզմների, նրանց նկատմամբ կիրառվող խտրականության և խոշտանգումների կանխարգելման մասին:«Ոչ միայն տեսական գիտելիքների, այլև ինտերակտիվ խաղերի միջոցով մասնակիցները կարողացան տեսական գիտելիքները կիրառել գործնականում», -մեզ հետ զրույցում նշեց Ն. Հովհաննիսյանը:

Դասընթացի ժամանակ առանձնակի ուշադրություն են դարձրել հատկապես խտրականության և խոշտանգումների դրսևորումներին և կանխարգելման միջոցներին Հայաստանում և Եվրոպայում, ինչպես նաև ատելության շարժառիթով հանցագործություններ թեմաներին:

Դասընթացն իրականացվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության /USAID/ ֆինանսական աջակցությամբ իրականացվող «ԼԳԲՏԻ անձանց մարդու իրավունքների խթանում հայաստանյան հասարակությունում» ծրագրի շրջանակներում: